

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ

(Շաբ. տե'ս «Բազմավեպ» 1974, ք. 3-4, էջ 428-431)

ՈՂԲ ԻԱ.

Բարձրագույն չորսի պէս ուղղաձիգ,
Կանգնած եմ ես աւասիկ.
Լոյս եւ ճաճանչն եմ Աստուծոյ փառքերուն,
Ոչ ոտնակոխ դեւերուն:

Բայց սիրեցի երբեմն կայթ ու կաքաւ,
Ինձ դաւաճան՝ օձն եղաւ.
Պէտք էի ես խաչով իյնալ ճանապարհ,
Թխուսի հետ հաւասար:

Եւ ես նոյնն եմ. մեղքն ու աշխարհն ինձ եղան
Դաշնակիցներ սիրեկան.
Այսօր, եղո՛ւկ, ողբ կը կարդամ ես ինձի,
Միայն հոգիս փրկէի:

Իմ անձըս, ա՛խ, մարդ կոչէի, ո՛չ անբան.
Լոյսը շողար վերնական.
Ու չըտէրէր վըրաս սարսափը մահուան,
Տեսնէի յոյս քաւութեան:

25.5.1972

ՈՂԲ ԻԲ.

Դարձեալ պատկեր եւ երազներ այլաբան
Ես կը պարզեմ իմ Աստուծոյ յանդիման.
Ճշմարտութեան խոստովանանք թող ըլլան,
Որ լոյսին դան ծածուկ մեղքերս մարդկային:

Անսանձ եմ ես, բարձրագույն քան թէ՛ ձի,
Մարդ մոլեկան, մանուկ առանց խըրատի.
Ձիթենի եմ առանց պտղի ճիւղերու,
Ո՛րքան թախիժ, ո՛րքան տանջանք ու խըռով:

Վա՛յ ինձ երկունք ու կեանք տըւող արդանդին,
Վա՛յ կաթնատու ըստինքներու հաճոյքին.
Աստուածային սուրն անողոք բարկութեան
Կը շողշողայ դիւտուս վերեւ տակաւին:

Տէ՛ր, իմ մեղքերս նորութիւն չեն քեզ համար.
Այլ նոյնն եմ ես. պատառոտուն, մարդ անկար.
Թող քու բարբառդ ըլլայ հանդերձ սրբութեան.
Հիւանդ եմ ես, բժշկէ՛՛ դիս հայրաբար:

19.11.1972

ՈՂԲ ԻԳ.

Ո՞ր ամպն ըղբեղ կրնայ չուքի պէս պատել,
Ո՞ր վայրն է քեզ երկինք, երկիր կամ սահման.
Չես երեւիր, բայց մեր մօտն ես յաւիտեան,
Գիտես մեր վիշտն ու թախիժներն ըսփոփել:

Մեղքերս հազար յիշատակներ ձրեցին,
Վերացաւ յոյսն, այրեցաւ խիղճս ողբերով.
Աշխարհս էր արտ, ես՝ թոյլ մըլակ, մաճին քով,
Ետ կը նայիմ, քայլերս խըրած սեւ հողին:

Ջարդարեցիր միտքըս լոյսով էութեան,
Բայց դիս խաբեց կեանքի պատրանքն անարեւ.
Ճամբուս վըրայ իջաւ մըլուշ ծանրաթեւ
Եւ ծուլութիւնն եղաւ ինձ մութ դամբարան:

Այս կեանքն ինձի սարսափ կ'ազդէ ամէն օր.
Մահ կը տեսնեմ, ես անէծքի պարտական.
Ի՞նչպէս ելլեմ Աստուածութեանդ յանդիման,
Ես՝ մեղքերու տակ ծանրաբեռն ուղեւոր:

Թշուառ եմ, Տէ՛ր, բարդեցի մեղքը մեղքին.
Պնդացաւ սիրտս, հեծքերս եղան կանչ ողբի.
Վերջինն ըլլայ, լըսէ՛ անգամ մ'ալ ինձի,
Տո՛ւր ինձ հանգիստ, անդորրութիւն իմ կեանքին:

29. 11. 1972

ՈՂԲ ԻԳ.

Ի՞նչ արժանիք ունիմ Քեզի դիմելու,
Առանց փառքի, արքայութեան մընացի.
Սուրբ հոգիներ չեկան ինձ հետ պարելու,
Ոչ ուռենին եղաւ կանաչ հովանի:

Ի՞նչ խօսքերով ոտքըդ ինկած աղերսեմ,
Երբոր մերկ եմ, չունիմ ըզգեստ մը լոյսի.
Երբոր նետուած ոտքի կոխան ծաղիկ եմ,
Երբ Յիսուսի մահէն բաժին մը չառի:

Ամէնօրեայ հացին համար չեմ տքնած,
Աղօթքս ունայն հովերու կանչ պիտ' ըլլայ.
Շիթ մը քրտինք ես ծոցն հողին չեմ նետած,
Ինչո՞վ Աստուած վարձահատոյց ինձ ըլլայ:

Ա՛խ, մեղքն եղաւ ախտ ու պալար ըսպիտակ,
Մարմինս չունի դեղեցկութիւն մանկական.
Թոյնը մահուան զիս պարուրեց բովանդակ,
Ու չըտեսայ ես մաքրութեան աւազան:
Գրկէ՛, Որդի, զիս համբոյրով սրբութեան,
Թող փարատին վիշտ ու տանջանք հոգեկան.
Ծարաւ եմ ես. տա՛ր զիս սիրոյ աւազանն,
Հոգւոյն սրբոյ նուէրն ըլլամ սրբացած:

1. 12. 1972

ՈՂԲ ԻԵ.

Սիրտըս նըման է ալեկոծ ծովու,
Մարմինս է նաւակ՝ մէջն հոգիս ծրփուն.
Ես կը նաւարկեմ ընդդէմ հողմերու,
Կը բախէ ալիքն, անհաշտ բռնութիւնն:

Ալիքներ անթիւ, ալիքներ հազար,
Իրար կը բախին, կը դառնան լեռներ.
Ջախջախ կը փշրի նաւուն ողնաշար,
Երկինք չեն հասնիր չըւան ու կայմեր:

Ուր մետաքսն էր դարդ գահերու վըրայ,
Կորսնցուց իր փայլն, անշքացաւ գոյնն.
Նաւապետն Յիսուս տրտում կը խոկայ,
Ձեռքը ծընօտին, կարծես պիտի լայ:

Պիտի տեսնե՞մ ես մարմինս նորոգուած,
Բազուկներըս՝ կայմ, երկինք բարձրացած.
Պիտի տեսնե՞մ ես ջախջախ բընութիւնս
Ալիքէ ալիք ժպտուն բարձրացած:

Պիտի տեսնե՞մ ես հոգւոյս կերպարանն
Գարնան պէս ժպտուն, ծաղկած պատուհան.
Պիտի մտնե՞մ ես խըրախճանքի տունն,
Քէջ հետ թեւապար, երկու սիրական:

Եւ եթէ վըրաս քու սէրդ տարածուի,
Լըսեմ Արարչիդ կոչումն հեռաւոր,
Մարմինդ ինձ կ'ըլլայ նշխար պաշտելի,
Ու վըրաս կ'իջնէ քաղցրութիւնդ աղուոր:

Թող խընամակալ ձեռքըդ երկարի,
Մատներդ՝ ճառագայթ, սէրդ՝ հեղումն յաւէտ.
Զըլլաս, դուն ո՞վ Տէր, լոկ անուն երկնի,
Այլ դըթած, կարող, Աստուած մեզի հետ:

7. 12. 1972